ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ
ԱՐԵՎԵԼԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏ

ԱՐԵՎԵԼԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐ
(Գիտական հոդվածների պարբերական ժողովածու)

№ 13

ԵՐԵՎԱՆ
ԵՊՀ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
2017

ЕРЕВАНСКИЙ ГОСУДАРСТВЕННЫЙ УНИВЕРСИТЕТ
ФАКУЛЬТЕТ ВОСТОКОВЕДЕНИЯ

ВОПРОСЫ ВОСТОКОВЕДЕНИЯ

(Периодический сборник научных статей)

№ 13

Ереван
Издательство ЕГУ
2017

YEREVAN STATE UNIVERSITY
FACULTY OF ORIENTAL STUDIES

JOURNAL OF ORIENTAL STUDIES
(scholarly periodical journal)

№ 13

YEREVAN
YSU PRESS
2017

**Հրատարակվում է Երևանի պետական համալսարանի
արևելագիտության ֆակուլտետի
գիտական խորհրդի որոշմամբ**

Խմբագրական խորհուրդ՝

Մելիքյան Գուրգեն բ. գ. թ., պրոֆեսոր *(նախագահ),* Մելքոնյան Ռուբեն բ.գ.թ., դոցենտ , Կարապետյան Ռուբեն պ.գ.դ., Խառատյան Ալբերտ պ.գ.դ., պրոֆեսոր, ՀՀ ԳԱԱ թղթակից-անդամ, Հովհաննիսյան Դավիթ բ.գ.թ., պրոֆեսոր, Հովհաննիսյան Լավրենտի բ.գ.դ., պրոֆեսոր, ՀՀ ԳԱԱ թղթ.-անդամ, Ոսկանյան Վարդան բ.գ.թ., դոցենտ, Սարգսյան Լևոն պ.գ.դ., պրոֆեսոր, Սաֆարյան Ալեքսանդր պ.գ.թ., պրոֆեսոր, Սաֆրաստյան Ռուբեն պ.գ.դ, պրոֆեսոր, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս, Քոչարյան Հայկ պ.գ.թ., դոցենտ, Կուզնեցով Վասիլի պ.գ.թ., դոցենտ (Ռուսաստան), Տեր-Մաթևոսյան Վահրամ պ.գ.թ., Ռեպենկովա Մարիա բ.գ.դ., պրոֆեսոր (Ռուսաստան), Էքմեքչյան Լեռնա PhD (ԱՄՆ), Գրեկյան Երվանդ պ.գ.դ., Իլյա Յակուբովիչ բ.գ.դ, պրոֆեսոր (Գերմանիա), Ահմադջան Ղուրոնբեկով բ.գ.դ, պրոֆեսոր (Ուզբեկստան)

© ԵՊՀ հրատ., 2017

Միրզոյան Էլինա[1]

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼՍԻ «ՔՈՒԼԻՍ» ԳԵՂԱՐՎԵՍՏԱԿԱՆ ԱՄՍԱԹԵՐԹԻ ՀԻՄՆԱԴՐՄԱՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԻՑ

Պոլսահայ մամուլի հարուստ պատմության մեջ թատերագետ Հակոբ Այվազի կողմից 1946 թ. Պոլսում հիմնադրված «Քուլիս» թատերական երկշաբաթաթերթն ունի իր ուրույն տեղը, դերն ու նշանակությունը:

«Բացառիկ երեւոյթ մը եղաւ «Քուլիս»ը՝ ամբողջ աշխարհի հայ իրականութեան համար, ուր միակ անձ մը, իր բոլոր միջոցներն ու կարելիութիւնները ի սպաս դրաւ այս եզակի հանդէսը ապրեցնելու համար», -գրում է հայազգի գրող-լրագրող Երվանդ Գոբելյանը:

1946թ., երբ ծնունդ է առնում «Քուլիսը», պոլսահայոց համար գեղարվեստական հանդես ունենալու մեծ պահանջ կար, քանի որ 1922թ.-ից սկսած մինչև 1946թ. արգելված էին հայալեզու և հայկական ներկայացումները[2]: Այս մասին Պոլսի «Մարմարա» օրաթերթի նախկին խմբագրապետ Պ. Զոպյանը գրում է. «Թուրքիոյ Հանրապետութեան հաստատումով երկրին մէջ կրօնքը բաժնուեցաւ աշխարհիկ կեանքէն եւ հետեւաբար սահմանափակուեցան Պատրիարքարանի իրաւասութիւնները, դժուարութիւններ ունեցանք պահպանելու Սահմանադրական իմաստով կազմակերպեալ համայնք մը ըլլալու մեր իրաւունքը եւ

[1] Բ.գ.թ., Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտի կրտսեր գիտաշխատող, ԵՊՀ արևելագիտության ֆակուլտետի թյուրքագիտության ամբիոնի ասիստենտ, էլ. փոստ՝ elina-mirzoyan@mail.ru

[2] Տե՛ս Այվազ Յակոբ, Լուցիքա Տուտու, Ստանպուլ, 2003, էջ 7:

մտաւորական դէմքերու պակասին կամ ստեղծուած նոր պայմաններուն բերումով, պահ մը կասեցաւ մշակութային կամ ընկերային կեանքը, դադրեցաւ նաեւ Հայ թատրոնը»[3]: Այդ պատճառով էր, որ Պոլսահայ դրամատիկ թատերախմբի անդամներից Վահրամ Փափազյանը, Հրաչյա Ներսիսյանը, Մկրտիչ և Ադրինե Ջանան ամուսնական զույգն արդեն իսկ մեկնել էին Երևան: Պոլսահայ համայնքը տարիներ ի վեր զրկված էր մայրենի լեզվով բեմադրված ներկայացումներից, ուստի պահանջը մեծ էր:

Այսպիսի պայմաններում Պոլսում գրեթե ամեն օր բազմաթիվ թատերախմբեր գործի անցան: Բազմավաստակ բեմադրիչ Էդուարդ-Սիսի Երեցյանն իրենց շուրջ է հավաքում «Երիտասարդաց»-ի բեմընկերներին և սկսում հայերենով ներկայացումներից: Բոլոր ներկայացումները լայն ժողովրդականություն էին վայելում: Արվեստի ծարավը մեծ էր հայ երիտասարդության մոտ: Նոր ուժեր եկան միանալու այդ թատերախմբերին: Աշոտ Մադաթյանն իր առաջին ներկայացումով պոլսահայությանը տվեց երկու կարևոր ուժեր՝ Զարուհի Դեյիրմենջյան և Գևորգ Գապարաջյան[4]:

Այս ամենը գիտակցելով հանդերձ, սակայն, երբ պետք է ձեռնարկվեր հանդեսի տպագրությունը, ոչ ոք դրամական աջակցությամբ զորավիգ չի կանգնում Հակոբ Այվազին: Եվ ինչպես Հակոբ Այվազն իր հուշերում է նշում, ինքն այդ տարիներին «շրջուն գործունեություն էր ձեռնարկել», և նա գրեթե ամեն օր

[3] «Մարմարա», Կ . Պոլիս, 21 նոյեմբեր, 1988:

[4] Այվազ Յ., «Ի՞նչպէս ծնունդ առաւ «Քուլիս»ը», «Ակօս», թիւ 306, 8 փետրուար 2002:

հանդիպում էր իր ընկեր Զարեհ Արշակին[5], ով փոքրիկ տպարան ուներ:

Զարեհ Արշակը և նրանց մյուս ընկեր Նազարեթ Տոնիկյանը[6] Հակոբ Այվազին առաջարկում են միանալ իրենց նախաձեռնությանը և երգիծաթերթ հրատարակել: Վերջինս համաձայնվում է միայն այն պայմանով, որ թերթը պետք է լինի գեղարվեստական: Այսպիսով՝ նրանք համաձայնության են գալիս. Հակոբ Այվազն իր ընկեր Զարեհ Արշակի և բեմընկեր Նազարեթ Տոնիկյանի հետ հիմնում են «Քուլիսը»: Թեև, պետք է նշենք, որ այս երեք ընկերների համագործակցությունն այս գործում երկար չի տևում. մեծ հույսերով ձեռնարկում են գործը, սակայն այն շուտով ավարտվում է, և Հակոբ Այվազը շարունակում է թերթի ողջ աշխատանքները միայնակ և սեփական դրամական միջոցներով[7]:

Հակոբ Այվազն իր հուշերում Զարեհ Արշակին որպես կռվազան և խորամանկ մեկն է հիշատակում, ում համար «Քուլիսի» հրատարակությունը «շաբաթականն ապահովելու տեսակէտով գործի մը ձեռնարկած ըլլալ կը նշանակէր»[8]: Այս մասին նա գրում է. «Նազարէթ Տօնիկեանն ու ես 50-ական (1946-ի դրամին արժէքով) ոսկի դրինք, իսկ ինք առաջին երկու թիւերուն գրաշարութիւնը պիտի ընէր, առանց դրամ ստանալու եւ սակայն

[5]Զարեհ Արշակը Բիլլուր փողոցի վրա գտնվող (Ղալաթիա) «Նատիկ» (փոքրիկ դստեր անունն էր) փոքրիկ տպարանի սեփականատերն էր (Տե՛ս Այվազ Յ., «Ի՞նչպէս ծնունդ առաւ «Քուլիս»ը», «Ակօս», թիւ 306, 8 փետրուար 2002):

[6] Նազարեթ Տոնիկյանը Բանգալթրի նշանավոր բաղնիքի սեփականատերն էր:

[7] Այս մասին առավել մանրամասն տե՛ս Այվազ Յ., «Մեղք որ երկար չտեւեց այս երրորդութիւնը», «Ակօս», թիւ 307, 15 փետրուար 2002, Այվազ Յ., «Ինքնամփոփումի շրջան», «Ակօս», թիւ 308, 22 փետրուար 2002:

[8] Այվազ Յ., «Մեղք որ երկար չտեւեց այս երրորդութիւնը», «Ակօս», թիւ 307, 15 փետրուար 2002:

երրորդ թիւէն սկսեալ իւրաքանչիւր թիւի համար պիտի ստանար 50 թրքական ոսկի:

Ինք՝ որեւէ պատասխանատուութիւն չունէր: Մենք երկուքս՝ բաժանորդներէն գալիք դրամներով պիտի վճարէինք ստանալիք դրամը, գանձած ըլլայինք կամ ոչ»[9]:

Կիսամսյա գեղարվեստական հանդեսի երկրորդ թիվը դեռ նոր էր լույս տեսել, երբ Հակոբ Այվազը հանդիպում է այդ պահին անասելի զայրացած Զարեհ Արշակին, ով, ինչպես պարզում է Այվազը, աննշան խնդրի պատճառով վշտացրել էր Նազարեթ Տոնիկյանին, իսկ վերջինս, «ես չկամ այլեւս այս գործին մէջ» ասելով, հեռացել էր տպարանից՝ չցանկանալով շարունակել համագործակցությունը[10]:

Այս միջադեպից հետո Զարեհ Արշակը, ով պետք է իրեն հանձնված ձեռագրերը գրաշարեր, այս ընթացքում սկսում է «Ժամանակ» օրաթերթում «անկապ-անկապակից հոդվածներ լցնել»[11]:

Ամբողջ ծանրաբեռնվածությունն ընկնում է Հակոբ Այվազի ուսերին. և իրենց համագործակցությունը 10-11 ամիսը դեռ չէր բոլորել, երբ Զարեհ Արշակունին Այվազին ասում է. «-Այվա՛զ, աս ասանկ չի քալեր: Վնասին ո՛ր կողմէն որ դառնանք՝ շահ է: Եկու՛ր բաժնուինք: Այսպիսով, ինչպես նշում է Հակոբ Այյվազը, ««Քուլիս» թատերախաղի առաջին վարագոյրը փակուեց….»[12]:

Այսպիսով՝ Այվազը հեռանում է «Նատիկ» տպարանից, իր դասընկեր Վահագն Արսլանյանի տպարանում թերթի տպագրության հարցերով շաբաթը մի քանի օր փոքրիկ

[9] Տե՛ս նույն տեղում:

[10] Այվազ Յ., «Մեղք որ երկար չտեւեց այս երրորդութիւնը», «Ակօս», թիւ 307, 15 փետրուար 2002:

[11] Տե՛ս նույն տեղում:

[12] Նույն տեղում:

աշխատասենյակ է նախատեսված գնի կես գնով վարձակալում[13]: Այնուհետև Հակոբ Այվազը հանդեսում սյունակ զբաղեցնելու, թղթակցելու համար հրավիրում է պոլսահայ լրջախոհ մտավորականների՝ Գրիգոր Խուդավերդյան, մի քանի լեզուների տիրապետող երիտասարդ Լևոն Գաբամաճյան, հմուտ լրագրող Զարեհ Նեմցե[14]:

Հանդեսը երբ դեռ նոր էր սկսել հրատարակվել, այն տպագրվում էր 16 էջաքանակով և 500 տպաքանակով, իսկ երբ Այվազը մենակ է հրատարակում, պարբերաթերթի տպաքանակը հասնում է 2500-ի՝ ունենալով ականավոր խմբագիրներ, հարյուրավոր համակիրներ և բաժանորդագիրներ:

Այնուհետև Այվազը «Քուլիսն» սկսում է ուղարկել եվրոպական, արտասահմանյան Հայ թերթերի, պարբերաթերթերի տպարաններ փոխանակումի խնդրանքով. այս ճանապարհով արտասահմանյան գեղարվեստական լուրերը փոխանցվում են նաև Պոլսի ընթերցողներին: Հակոբ Այվազն արտասահմանից մեծատաղանդ գրող Նշան Պեշիկթաշլյանի աշխատակցությունն է խնդրում, ով անմիջապես ընդունում է առաջարկը: «Պէշիկթաշլեան, բնիկ Պոլսեցի, Էսաեան վարժարանի աշակերտ, ինչպէս նաեւ Պոլսահայ Տրամաթիկի առաջին շրջանի դերասաններէն էր եղած, նոյնիսկ միջոց մըն ալ մասնակցած էր Ֆէլեկյան քոյրերու ներկայացումներուն: Այս վարպետ գրողին առաջարկեցի ինծի ուղարկելիք իւրաքանչիւր յօդուածին համար

[13] Վահագն Արսլանյանը ոչ միայն Հակոբ Այվազի դասընկերն էր, այլև նրա քեռու դստեր՝ Զապելի ամուսինն էր:

[14]Այվազ Յ., «Ինքնամփոփումի շրջան», «Ակօս», թիւ 308, 22 փետրուար 2002: Տե՛ս նաև Այվազ Յ., «Նոր աշխատակիցներ եկան միացան», «Ակօս», թիւ 309, 1 մարտ 2002:

500 ֆրանք վճարել: Անմիջապէս ընդունեց[15]»,- գրում է Հակոբ Այվազը: Սակայն այս համագործակցությունն էլ երկար չի տևում, քանի որ «Քուլիս» ամսաթերթի համար ուղարկված նյութն ամսաթերթից առաջ մեկ այլ օրաթերթի մեջ էր տպագրվել, իսկ քանի որ «Քուլիսն» ամսաթերթ էր, ընթերցողը կկարծեր, թե այն արտատպում է մյուս թերթերից: Այս մասին Այվազն անմիջապես տեղեկացնում է նրան, որին ի պատասխան լսում է. «Ձեր օրաթերթերը իմ գրութիւններս կը զողնան արտասահմանեան մամուլէն, ի՞նչ կրնամ ընել»[16]:

Ավելորդ չէ նշել, որ թերթը շուրջ 50 տարի (1946-1996 թթ.) հրատարակվել և գոյատևել է միայն Հակոբ Այվազի դրամական միջոցներով, քանի որ «երբ Քուլիսի բաժանորդագին կը պահանջուէր, միլիոններէ, միլիառներէ ճառող, ընչաքաղց առեւտրական մը, յանկարծ իր քսակը կը գոցէր՝ ասելով «Մարդ Աստուծոյ, դուն գործ բան չունի՞ս որ Հայերէն թերթ կը հրատարակես»»[17]:

Թեև այս ամենն անասելի դժվար էր այդ տարիներին իրականացնել, այդուհանդերձ, Հակոբ Այվազը «Լենկթեմուրի մրջյունի» պես, ինչպես նաև առանց որևէ պետական հաստատության, կազմակերպության աջակցության, նույնիսկ չունենալով «թէքնիկ կարելիութիւններ», կամքի անընկճելի ուժով, մեծ սրտով կարողացել է հանդեսը հասցնել հիսնամյակի պատվաբեր հանգրվանին[18]: Թերևս սա էր ժամանակներից ու մարդկանցից դուրս Հակոբ Այվազի փիլիսոփայությունը[19]:

---

[15] Տե՛ս նույն տեղում:

[16] Այվազ Յ., «Ինքնամփոփումի շրջան», «Ակօս», թիւ 308, 22 փետրուար 2002:

[17] Այվազ Յ., «Պատրաստուած լրագրողը՝ Մարտիրոս Գօչունեան», «Ակօս», թիւ 275, 6 յուլիս 2001:

[18] Կոպէլեան Ե., «Ուղերձներ՝ խօսուած Հայ Մամուլի 200-ամեակի յուշահանդէսին», «Ժամանակ», 18 հոկտեմբեր 1994:

[19] Գուցե Հակոբ Այվազն առաջնորդվել է իր ուսուցչի՝ վաստակավոր խմբագիր Մարտիրոս Գոչունյանի իրեն տված այն խորհրդով, որ նա, լինելով արվեստագետ, ստիպված է եղել բաժանվել բեմից, մամուլի ասպարեզն էլ նման է «դերասանության». սևին սև, ճերմակին ճերմակ ասելը նա պետք է դարձնի

Ի հեճուկս անցնող ժամանակի՝ «Քուլիս» գեղարվեստական հանդեսը պետք ունի վերստին թերթող, թղթատող մատների, իր էջերի վրա խոնարհվող հայացքների:

ИЗ ИСТОРИИ ОСНОВАНИЯ ХУДОЖЕСТВЕННОГО ЕЖЕМЕСЯЧНИКА “КУЛИС” В КОНСТАНТИНОПОЛЕ

(резюме)

Мирзоян Элина

В статье описана история основания и становления одного из самых интересных армянских журналов Константинополя. В истории армянской прессы Константинополя свое особое значение имеет театральный журнал ‘’Кулис’’. Ежемесячник сыграл заметную роль в развитии культурно-исторической концепции истории города. Новизна работы определяется недостаточной изученностью такого типа журнала в истории армянской прессы.

Журнал, посвященный проблемам различных искусств, был ярким показателем развития культурной жизни константинопольских армян.

Знакомство с ‘’Кулисом’’ помогает понять и почувствовать ту атмосферу творческих исканий, тот взлет культурной жизни в стране, которую имели армяне.

Ежемесячник занял особое место в армянской театральной критике. Журнал очень содержательный.

նշանաբան, ինչն աներկբայորեն ճշգրիտ բանաձև էր Հակոբ Այվազի կյանքում (Տե՛ս Այվազ Յ., «Պատրաստուած լրագրողը՝ Մարտիրոս Գօչունեան», «Ակօս», թիւ 275, 6 յուլիս 2001):